

1005

1920

3K33

m-84

2010

6730

1006
29563

2001

ՀԱՅԿԱՆԻ ԿՈՍՏՈՆԻՍՏԱՆԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ (ԲՈՒՇԵՒԿՆԵՐԻ)

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ, ԲՈՂՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ:

ար Ի Ս Տ Ա Լ Ի Ն

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Սորհրդային իշխանութեան քաղաքականութիւնը ազգային հարցում երեք տարւա յեղափոխութիւնը և աղաքացիական կռիւլ Ռուսաստանում ցոյց տւին, որ առանց Կենտրոնական Ռուսաստանի և նրա ծայրագագաւանների փոխադարձ պաշտպանութեան տնկարեղի է յեղափոխութեան յաղթանակը, տնկարեղի է Ռուսաստանի ազատագրումը իմպերիալիզմի ճակատից: Կենտրոնական Ռուսաստանը, համաշխարհային յեղափոխութեան այդ օջախը, — չի կարող երկար գիմանալ առանց ծայրագագաւանների օգնութեան, որոնք այնքան հարուստ են հում նիւթով, վառելիքով, պարենաւորման մթերքներով, Ռուսաստանի ծայրագագաւանները՝ առանց տւելի զարգացած կենտրոնական Ռուսաստանի քաղաքական, զինուորական և կազմակերպչական օգնութեան՝ իրանց հերթին դատապարտւած են անխուսափելի իմպերիալիստական ստրկութեան:

Եթէ ճիշտ է այն զրութիւնը, թէ տւելի զարգացած պրոլետարական Արեւմուտքը չի կարող տապալել համաշխարհային բուրժուազիային առանց պակաս զարգացած, բայց հում նիւթով և վառելիքով հարուստ դիւղացիական Արեւելքի: — ապա նոյն չափ ճիշտ է նաեւ միւս զրութիւնը՝ թէ տւելի աւերացած կենտրոնական Ռուսաստանը չի կարող հասցնել յեղափոխութեան գագաթը իր բնական վախճան:

նին առանց պակաս զարգացած, բայց անհրաժեշտ աղբիւրներով, սեսուրաներով հարուստ Ռուսաստանի ծայրագագաւանների օգնութեան:

Սորհրդային Ռուսաստանի հանդէս գալու առաջին օրւանից այս հանգամանքը հաշի էր առնում Անտանտան, երբ նա իրականացնում էր Կենտրոնական Ռուսաստանի տնտեսական մեկուսացումը, տնտեսապէս շրջապատելու ծրագիրը՝ անջատելով նրանից ամենից տւելի կարեւոր ծայրամասերը: Յետագայում — 1918 թւականից մինչև 1920 թիւը — Անտանտայի Ռուսաստանի դէմ ուղղւած բոլոր արշաւանքների, ինչպէս նաեւ Ուկրաինայում, Ազրբեյջանում և Թուրքեստանում նրա ներկա մեքենայութիւնների կրակեա ծառայում է Ռուսաստանին տնտեսապէս օղակելու այդ նոյն ծրագիրը:

Ուրեմն, մեզ համար առաւել ևս մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում Ռուսաստանի կենտրոնի և ծայրագագաւանների մէջ հիմնաւոր միութեան ապահովումը: Այստեղից բխում է Ռուսաստանի կենտրոնի և ծայրամասերի մէջ որոշ յարաբերութիւն, որոշ կապ հաստատելու անհրաժեշտութիւնը, որ ապահովէ սերտ, անխախտելի միութիւն նրանց մէջ:

Խնչդիսի ձևեր պիտի ընդունեն այդ յարաբերութիւնները, ուրիշ խօսքով — ինչո՞ւն է կայանում Սորհրդային Խախտութեան ազգային քաղաքականութիւնը Ռուսաստանում:

Որպէս կենտրոնի և ծայրագաւառների փոխ-յարաքերութեան ձև, պէտք է բացատրել ծայրագաւառների անջատման պահանջը Ռուսաստանից ոչ այն պատճառով, թէ չի կարելի այդ հարթութեան վրա դնել խնդիրը, կամ նա հակասում է կենտրոնի և ծայրամասերի մէջ միութեան հաստատման, —այլ պէտք է ժխտել այն, որովհետև նա հիմնաւորապէս հակասում է ինչպէս կենտրոնի, նոյնպէս և ծայրագաւառների ժողովրդական մասանների շահերին: Մի կողմ թողնելով այն խնդիրը, որ ծայրագաւառների անջատումը կվտանգի յեղափոխական կենտրոնական Ռուսաստանի ոյժը, —որը այսօր իր մէջ մարմնացնում է Արեւմուտքի և Արեւելքի ազատագրական շարժման ոգին, —անջատւած ծայրագաւառները հէնց իրանք կընկնեն համաշխարհային իմպերիալիզմի լծի տակ:

Բուսական է նայել Ռուսաստանից բաժանւած Վրաստանին, Հայաստանին, Լեհաստանին, Ֆինլանդիային և այլն, —որոնք միայն անւանական անկախութիւն են վայելում, իսկ իրապէս Անւանտայի վասալներն են, — բաւական է վերջապէս՝ յիշել Ուկրայնայի և Ադրբեջանի մօտաւոր անցեալի պատմութիւնը, — երբ առաջինը թալանւում էր գերմանական կապիտալից, իսկ երկրորդը Անտանտայից, — որպէսզի հասկանալ ծայրագաւառների անջատման պահանջի ամբողջ հակա-յեղափոխականութիւնը ներկա համաշխարհային հանգամանքներում: Պրոլետարական Ռուսաստանի և իմպերիալիստական Անտանտայի մէջ, աճող մահու և կեանքի կռիւ պայմաններում ծայրագաւառների համար հընարաւոր է երկու ելք:—

Կամ Ռուսաստանի հետ և ուրեմն ծայրագաւառների աշխատաւոր մասանների ազատագրումը իմպերիալիզմի ստրկութիւնից,

կամ Անտանտայի հետ և ուրեմն՝ կոստափելի իմպերիալիստ, լուծք:

Երրորդ ելք չկա:

Իբր թէ «անկախ» Վրաստանի, Հայաստանի, Լեհաստանի, Ֆինլանդիայի և այլն այսպէս կոչւած անկախութիւնը միայն խաբուսիկ տարազ է, որ քողարկում է այդ թող ներքի մեղ ասել՝ «պետութիւնների» կատարելապէս զրուծիւնը իմպերիալիստական այս կամ այն խմբակից:

Իհարկէ, Ռուսաստանի ծայրագաւառները, այդ ծայրամասերում ապրող ազգութիւններն ու ցեղերը, — ինչպէս նաև ընդ որ միւս ազգերը, — անվիճելի իրաւունք ունին անջատել Ռուսաստանից, և եթէ որեւէ մէկ այդ ազգութիւններից՝ իւր հոծ բաղաժութեամբ՝ որոշէր բաժանել Ռուսաստանից, —ինչպէս այդ արեւց Ֆինլանդիան 1917 թւականին, — ապա ամենայն հաւանականութեամբ Ռուսաստանին կմնար միայն արձանագրել այդ փաստը և վաւերացնել, իր սանկցիան տալ անջատմանը: Բայց խնդիրը այստեղ ազգերի իրաւունքների մասին չէ, որոնք անվիճելի են, այլ ինչպէս կենտրոնի, նոյնպէս և ծայրագաւառների ժողովրդական մասանների շահերի մասին, և խօսքը վերաբերում է այն ազդեցիկայի բընաւորութեանը, որը բնորոշում է այդ շահերով և որպիսի ազդեցիկա պարտաւոր է վարել մեր կուսակցութիւնը, եթէ նա չի օգնում ինքն իրանից հըրաժարել, եթէ նա ուզում է որոշ ուղղութեամբ ազգել ազգութիւնների աշխատաւոր մասանների կամքի վրա: Իսկ ժողովրդական մասանների շահերը ասում են, որ ծայրագաւառների անջատման պահանջը յեղափոխութեան ներկա շրջանում, ստադիայում, խորապէս հակա-յեղափոխական է:

Մի ժամանակ պէտք է բացատրել այսպէս կոչւած ազգային — կուլտուրական աւտօնօմիան, որպէս միութեան ձև Ռուսաստանի կենտրոնի և ծայրամասերի միջև: Ազգային — կուլտուրական աւտօնօմիայի հայրենիք Աւստրո-Հուն-

գարիայի վերջին տասն տարիների պրակտիկան ցոյց տուց ազգային — կուլտուրական աւտօնօմիայի ամբողջ էֆէմերութիւնը և անկենսականութիւնը, որպէս բաղադրական պետութեան մէջ ապրող ազգութիւնների աշխատաւոր մասանների միութեան ձև: Ազգային — կուլտուրական աւտօնօմիայի հեղինակներ՝ Շպերկինգերը և Բաուէրը, որոնք այսօր նստած են իրանց ազգային ճարտիկ ծրագրի ջարդած տաշտի առաջ, մեղ կենդանի օրինակ: Վերջապէս, ազգային — կուլտուրական աւտօնօմիայի ռահվիրան Ռուսաստանում, մի ժամանակ նշանաւոր Բուդդը ինքը ստիպւած էր պաշտօնապէս ճանաչել ազգային — կուլտուրական աւտօնօմիայի աւելորդութիւնը, հրապարակով յայտարարելով, թէ՛

Կապիտալիստական իրաւակարգերի շրջանակներում զրւած «ազգային — կուլտուրական աւտօնօմիայի պահանջը, կ որ ց ն ու մ է իր իմաստը սօցիալիստական յեղափոխութեան պայմաններում» (տես «Բուդդի X» 1) 4-օնֆէրնցիան» երես 31 և 420):

Որպէս միակնպատակալարմար ձևը կենտրոնի և ծայրագաւառների միութեան մնում է ուրոյն կենցաղով և ազկարնակութեան կազմով տարբերող ծայրագաւառների շրջանային աւտօնօմիան (ОБЛАСТНАЯ АВТОНОМИЯ), որ պէտք է կապի Ռուսաստանի ծայրագաւառները կենտրոնի հետ Ֆէդերատիւ կապերով, այսինքն այն խորհրդային աւտօնօմիան, որ իր գոյութեան առաջին օրւանից յայտարարեց Խորհրդային իշխանութիւնը և որ այսօր իրականացնում է ծայրագաւառներում վարչական (ադմինիստրատիւ) կոմիտեանների և աւտօնօմ խորհրդային հանրապետութիւնների ձևի տակ:

Խորհրդային աւտօնօմիան մի սաւած և ընդմիշտ զրւած բան չէ. նա թոյլատրում է զարգացման դանադան ձևեր և աստիճաններ: Նեղ վարչական աւտօնօմիայից (Վօլգայի գեր-

մանացիները, Կուլաշները, Կօրեխները) նա անցնում է աւելի լայն, քաղաքական աւտօնօմիային (բոլշեխները, Վօլգայի թուրքերը, կիրգիզները), — լայն, քաղաքական աւտօնօմիայից դէպի նրա աւելի լայնացրած ձևը (Աւերայնան, Թուրքեստանը), — վերջապէս՝ Ուկրայնան տիպի աւտօնօմիայից դէպի պայմանական յարաքերութիւնների Ադրբեջանը: Խորհրդային աւտօնօմիայի այդ առաձգականութիւնը, էլաստիքական լինելը նրա արժանիքներից մէկն է, որովհետև այդ առաձգականութիւնը թոյլ է տալիս նրան տարածել կուլտուրական և տնտեսական տարբեր աստիճանների վրա կանգնած Ռուսաստանի բաղադրան ծայրամասերի վրա:

Երեքամիս խորհրդային ազգային քաղաքականութիւնը Ռուսաստանում ցոյց տուց, որ Խորհրդային Ռուսաստանը՝ իրականացնելով խորհրդային աւտօնօմիան իր բաղադրական ձևերով՝ կանգնած է ուղիղ ճանապարհի վրա, որովհետև միայն այդպիսի քաղաքականութեան շնորհիւ նրան յաջողեց իր համար ճանապարհ բացել դէպի Ռուսաստանի ամենայնոամնաց ծայրագաւառները, քաղաքական կեանքի կոչել ամենայնոամնաց և ազգային տեսակէտից շատ տարբեր մասաններին, կապել այդ մասանները կենտրոնի հետ ամեն տեսակ կապերով, — մի խնդիր, որ աշխարհիս մէջ որեւէ կառավարութիւն ոչ միայն չէր լուծել, այլև չէր դրել (վախում էր դնել) իր առաջ:

Վարչական, ադմինիստրատիվ փերաբաժանումը Ռուսաստանում Խորհրդային աւտօնօմիայի սկզբունքների հիման վրա դեռ ևս չի վերջացած: Հիւսիսային - Կովկասցիները, կալիկները, չէրէմիսները վոտեակները բուրբատները և ուրիշները դեռ ևս սպասում են խնդրի լուծմանը, բայց ինչպիսի ձև էլ ընդունելու լինի ապագա Ռուսաստանի վարչական քարտէ-

զը և ինչպիսի պակասութիւններ էլ ունենա նա,—իսկ պակասութիւններ եղել են,—այժմէն պէտք է ընդունել, որ կատարելով վարչական վերաբա-
ժանումը շրջանային աւտոնոմիայի սկզբունքների համաձայն, Ռուսաս-
տանը խոշորագոյն քայլն արեց ծայ-
րագաւառները պրոլետարական կենտ-
րոնի շուրջը համախմբելու գործում
և իշխանութիւնը ծայրագաւառների
ժողովրդական մասսաների շատ խա-
ւերին մօտեցնելու համար:

Սակայն խորհրդային աւտոնոմիայի այս կամ այն ձևի յայտարարումը, համապատասխան ղեկընդունների ու կարգադրութիւնների հրատարակումը նոյնիսկ ծայրագաւառների կառավա-
րութիւնների ստեղծումը—դեռ ևս բաւական չեն կենտրոնի և ծայրամա-
սերի միութիւնը ամրապնդելու հա-
մար: Որպէսզի իսկապէս ամրապնդել
այդ միութիւնը, պէտք է նախ և առաջ
վերացնել ծայրագաւառների այն խոր-
թութիւնը և փակաժութիւնը, այն
նահագնաւորութիւնը և անկուտու-
րականութիւնը, այն անվստահութիւ-
նը ղեպի կենտրոնը, որոնք մնացել են
ծայրագաւառներում որպէս ցարական
վայրենի քաղաքականութեան ժառան-
գութիւն: Յարկովը ծայրագաւառնե-
րում զիտամբ մշակում էր նահապե-
տական-ֆեոդալական ճնշում, որպէսզի
ստրկութեան և անկիրթ դրութեան
մէջ պահէ մասսաները: Յարկովը ծայ-
րագաւառների լաւագոյն անկիւննե-
րում զիտամբ բնակեցնում էր կօլօ-
նիզատօրական էլէմէնտներ, զաղու-
թային տարրերի, որպէսզի քիչ տե-
ղացիներին աւելի վատ բայօններ և
ուժեղացնի ազգային խտրութիւնը:
Ծարիկովը հալածում էր, իսկ յաճախ
ուղղակի փակում տեղական դպրոցը,
թատրոնը, կրթական հաստատութիւն-
ները՝ որպէսզի մթութեան մէջ պահի
մասսաները: Ծարիկովը խոչընդոտ էր
հանգիստնում տեղական ազգաբնակչու-
թեան լաւագոյն մարդկանց ամեն նա-

խաձեռնութեան: Վերջապէս, ցարիզմը
սպանում էր ծայրագաւառների ժողո-
վրդական մասսաների ամեն գործու-
նէութիւնը:

Այս բոլորի շնորհիւ ցարիզմը տե-
ղացիների մէջ ծնեցրել էր խորը ան-
վստահութիւն, որը յաճախ փոխում
էր թշնամութեան, դէպի ամեն մի ուս-
ական գործ: Որպէսզի ամրապնդել
կենտրոնական Ռուսաստանի և ծայ-
րագաւառների միջև միութիւնը, ան-
հրաժեշտ է լինվիղացիայի ենթարկել
այդ անվստահութիւնը, պէտք է ստեղ-
ծել փոխադարձ հասկացողութեան և
եղբայրական վստահութեան մթնո-
լորդ:

Բայց որպէսզի վերջ տալ անվստա-
հութեան, պէտք է նախևառաջ օգնել
ծայրագաւառների ժողովրդական մաս-
սաներին ազատելու ֆեոդալական-
նահապետական մնացորդների լծից,
պէտք է գործով, և ոչ միայն խօսքով,
վերջացնել գաղութային, կօլօնիզա-
տօրական տարրերի բոլոր և ամեն
տեսակ առանձնաշնորհումները, պրի-
վիլեջիաները, պէտք է միջոց տալ
ժողովրդական մասսաներին ճաշակել
յեղափոխութեան նիւթական բարիք-
ներից (материальных благ): Կործ,
պէտք է ապացուցել մասսաներին, որ
կենտրոնական պրոլետարական Ռու-
սաստանը պաշտպանում է նրան և նրա
շահերը, և պէտք է ապացուցել այն
հէ միայն կօլօնիզատօրներին ու բուր-
ժուական նացիոնալիստներին հալա-
ծանքներով,—որոնք յաճախ անհաս-
կանալի են մասսաներին,—այլ նախև-
առաջ հետևողական և մտածած տըն-
տեսական քաղաքականութեամբ:

Բոլորին քաջ յայտնի է լիբերալնե-
րի պահանջը կրթութեան պարտադիր
լինելու մասին: Կոմմունիստները չեն
կարող լիբերալներէից աւելի աջ լինել:
Նրանք պարտաւոր են այնտեղ իրա-
կանացնել ընդհանուր կրթութիւն,
եթէ միայն ուղղում են վերջ տալ ժո-
ղովրդական տգիտութեանը, եթէ ու-

ղղում են մտաւորապէս մօտեցնել ի-
րար կենտրոնն ու Ռուսաստանի ծայ-
րագաւառները: Սակայն դրա համար
անհրաժեշտ է դարգացնել տեղական
աղգային դպրոցը, աղգային թատրո-
նը, աղգային կրթական հաստատու-
թիւնները, բարձրացնել ծայրագաւառ-
ների ժողովրդական մասսաների կուլ-
տուրական մակարդակը,—որովհետեւ
դժուար թէ կարիք լինի ապացուցելու
թէ տգիտութիւնն ու մութ խաւարը
Խորհրդային իշխանութեան ամենա-
կատաղի թշնամիներն են: Մենք չը-
գիտենք, թէ մեր աշխատանքը այդ
ուղղութեամբ ճիշդն յաջող է գնում
ընդհանրապէս, բայց մեզ հաղորդում
են, որ մեր նշանաւոր ծայրագաւառ-
ներից մէկում տեղական կրթական
կոմիտարիատը տեղական դպրոցական
կարիքների վրա ծախսում էր կրէ-
դիտների ընդամենը 10 տոկոսը: Եթէ
այդ ճիշտ է, ապա պէտք է ընդունել,
որ այդ ասպարիզում դժբախտաբար
մենք «հին ուժիմից» այնքան էլ հե-
ռու չենք գնացել:

Խորհրդային իշխանութիւնը՝ ժողո-
վուրդից կտրւած մի իշխանութիւն
չէ: Ընդհակառակը, նա միակ իշխա-
նութիւնն է, որ բոլորն է ուսական
ժողովրդական մասսաների խորքից և
հարազատ ու մօտ է: Դրանով է իսկա-
պէս բացատրւում այն չտեսնած ուժն
ու ճկունութիւնը, որ սովորաբար ցոյց
է տալիս Խորհրդային իշխանութիւնը
կրիտիքական բողոքներին: Անհրա-
ժեշտ է, որ Խորհրդային իշխանու-
թիւնը դառնա նոյնչափ հարազատ ու
մօտ Ռուսաստանի ծայրագաւառների
ժողովրդական մասսաներին: Բայց որ-
պէսզի Խորհրդային իշխանութիւնը
դառնա հարազատ, նա պէտք է նա-
խևառաջ հաւանալի լինի նրանց:
Ուստի անհրաժեշտ է, որ ծայրագա-
ւառների բոլոր սովետական օրգան-
ները— դատարանը, վարչութիւնը,
տնտեսութեան օրգանները, ինչպէս
նաև կուսակցական կազմակերպու-

թիւնները,—որքան կարելի է կազմ-
ւած լինին տեղական մարդկանցից,
որոնք զիտեն տեղական ազգաբնակչու-
թեան կենցաղը, բարքերը, սովորու-
թիւնները, որ տեղական ժողովրդա-
կան մասսաների միջի բոլոր լուա-
պոյն մարդիկ հրաւիրէին այդ հաս-
տատութիւններին մասնակցելու, որ
տեղական աշխատաւորական մասսա-
ները կապէին երկրի կառավարու-
թեան բոլոր ասպարէզների հետ,—
դրանց թոււմ նաև ղինւորական կազ-
մակերպութիւնների հետ,—որ մասսա-
ները տեսնեն, թէ Խորհրդային իշխա-
նութիւնը և նրա օրգանները իրենց
սեփական ջանքերի արդիւնք են և
ժողովրդական բաղձանքների մարմ-
նացում: Միայն այսպիսի ճանապար-
հով հնարաւոր է հաստատել անքու-
տելի հոգևոր կապ մասսաների և իշ-
խանութեան մէջ, միայն այսպիսի
ճանապարհով կարելի է Խորհրդային
իշխանութիւնը դարձնել հասկանալի և
մօտ ծայրագաւառների աշխատաւոր
մասսաների համար:

Մեր մի քանի ընկերներ նայում են
Ռուսաստանի աւտոնոմ հանրապե-
տութիւնների և ընդհանրապէս խորհր-
դային աւտոնոմիայի վրա որպէս ժա-
մանակաւոր, թէև անհրաժեշտ չարի-
քի վրա, որը չի կարելի չթոյլատրել
մի քանի հանգամանքների պատճառով,
բայց օրի հետ պէտք է կուել, որպէս-
զի ժամանակին վերցնել այն: Հաղիւ
թէ կարիք կա ապացուցելու, որ այդ
հայեացքը հիմնաւորապէս սխալ է, և
նա, յամենայն դէպս, խորհրդային իշ-
խանութեան աղգային քաղաքականու-
թեան հետ ոչ մի առնչութիւն չունի:
Խորհրդային աւտոնոմիան մի վերացա-
կան, արստրալիտ ու չմտածած բան
չէ, առաւել ևս չի կարելի համարել
այն մի սոսկ ղեկարարաւ խոստում:
Խորհրդային աւտոնոմիան ամենաուճալ,
ամենակոնկրէտ ձևն է ծայրագաւառ-
ների և կենտրոնական Ռուսաստանի
միութեան: Ոչ ոք չի կարող ժխտել,

որ Ուկրաինան, Սերբիան, Թուրքիան, Կիրգիզիան, Բաշկիրիան, Ռաթարիան և այլ ծայրամասերը, որչափ որ նրանք ձգտում են ժողովրդական մասսաների կուլտուրական և տնտեսական լուսաւորութեան, — չեն կարող գոյութիւն ունենալ առանց մայրենի դպրոցի, դատարանի, վարչութեան, իշխանութեան օրգանների, կազմած գլխաւորապէս տեղական մարդկանցից, Դեռ աւելին. այդ շրջանների իրական սովետիզացիան, նրանց վերածումը խորհրդային երկիրների (սերտ կապած կենտրոնական Ռուսաստանի հետ, որպէս մի պետական, ամբողջութեւն) անհնար է առանց տեղական դպրոցի լայն կազմակերպման, առանց դատարանի վարչութեան, իշխանութեան օրգանների ստեղծման տեղական մարդկանցից, որոնք զիտեն ազգաբնակչութեան կենցաղն ու լեզուն: Բայց հիմնել մայրենի լեզուի դպրոց, վարչութիւն, իշխանութեան օրգանները — այդ նշանակում է հէնց գործով իրականացնել խորհրդային աւտոնոմիան, որովհետեւ խորհրդային աւտոնոմիան ոչ այլ ինչ է, եթէ ոչ այդ բոլոր հաստատութիւնների, ինստիտուտների գումարը՝ ուկրաինական, թուրքաւանական, կիրգիզական և այլն ձեւեր ընդունած:

Այս բոլորից յետո խնչպէս կարելի է լուրջ կերպով խօսել խորհրդային աւտոնոմիայի էֆէկտիւթեան, նրա հետ կապուած անհրաժեշտութեան մասին և այլն:

Երկուսից մէկը.

Կամ ուկրաինական, ադրբեջանական, կիրգիզական, ուզբեքական, բաշկիրական և այլ լեզուները իրենցից խակապէս ներկայացնում են իրականութիւն, հետևաբար այդ շրջաններում բացարձակապէս անհրաժեշտ է դարձացնել մայրենի դպրոցը, դատարանը, վարչութիւնը, իշխանութեան օրգանները կազմել տեղական մարդկանցից, և ուրեմն խորհրդային աւտոնոմիան այդ շրջաններում պէտք է

մտցնել մինչև վերջը, առանց վերապահումների.

Կամ ուկրաինական, ադրբեջանական և այլ լեզուները դատարկ հնարաբանութիւններ (выдумки) են, և հետևաբար դպրոցն ու այլ հիմնարկութիւնները, ինստիտուտները մայրենի լեզուով անհրաժեշտ չեն, և ուրեմն խորհրդային աւտոնոմիան պէտք է զէն շարունակ, որպէս անպէտք մի իր:

Երրորդ ճանապարհ. փնտռելը — հետևանք է իրերի գրութեան անտեղեկութեան կամ գծախառն տեսութեան:

խորհրդային աւտոնոմիայի իրականացման լուրջ խոչընդոտներից մէկը հանդիսանում է տեղական ծագումն ունեցող ինտելիգենտ ոյժերի մեծ պակասը ծայրագաւառներում, ինստիտուտների պակասը խորհրդային և կուսակցական աշխատանքների առանց բացառութեան բոլոր ճիւղերի համար: Այս պակասը չի կարող չխանգարել ինչպէս կրթական, նոյնպէս և յեղափոխական-շինարարական աշխատանքը ծայրագաւառում: Հէնց այդ իսկ պատճառով սխալ կը լինէր և փաստակարգորժի համար՝ յետ մղել տեղական ինտելիգենտների առանց այն էլ սակաւթիւ խմբակները, որոնք շատ կարելի է կուղենային ծառայել ժողովրդական մասսաներին, բայց թերեւս այդ չեն կարողանում անել այն պատճառով, որ նրանք՝ որպէս ոչ — կոմունիստներ՝ իրենց շրջապատում են կարծում անպատահութեան մթնոլորտով և վախենում են հնարաւոր հալածանքներից, ընկրտանքներից: Այդ խմբակների վերաբերմամբ յաջողութեամբ կարելի է կիրառել խորհրդային աշխատանքին նրանց մասնակից անելու քաղաքականութիւնը, — տնտեսութեան, ագրարային, պարենւորման և այլ պաշտօնների հրահրման քաղաքականութիւնը՝ նրանց աստիճանական սովետիզացիայի ենթարկելու նպատակով: Որովհետեւ զժառ թէ կարելի լինի պնդել, թէ

այդ ինտելիգենտ խմբակները աւելի պակաս փոտանելի են, քան՝ առանց թէ՛ այն հակա-յեղափոխական ղեկավարական մասնագէտները, որոնք (չնայած նրանց հակաիդէոլոգիականութեան) այնուամենայնիւ աշխատանքի հրաւիրեցին և ապա աստիճանաբար սովետիզացիայի ենթարկեցին շատ կարեւոր պաշտօններում:

Սակայն ազգային ինտելիգենտ խմբակների օգտագործումը չափազանց քիչ է բաւարարելու համար ինստիտուտական պահանջին: Միաժամանակ անհրաժեշտ է ծայրագաւառներում դարձնել կառավարչական աճին ճիւղերի վերաբերեալ դասընթացները և դպրոցների ցանցերը, տեղական մարդկանցից ինստիտուտական շարքեր (կադրեր) ստեղծելու համար: Որովհետեւ պարզ է, որ առանց այդպիսի շարքերի ներկայութեան, մայրենի դպրոցի, դատարանի, վարչութեան և այլ հաստատութիւնների (ինստիտուտների) կազմակերպումը մայրենի լեզուով չափազանց դժուար կլինի:

խորհրդային աւտոնոմիայի իրականացման ոչ պակաս լուրջ խոչընդոտ է հանդիսանում այն յաճախ կրպիտ անտակտութեան համուղ — շատադրականութիւնը, որ ցոյց են տալիս մի քանի ընկերներ ծայրագաւառների սովետիզացիայի գործում: Երբ մեր այդ ընկերները իրանց վրա են վերցնում «հերոսական ջանքեր» իրականացնելու համար «անաղարտ կոմունիզմը» այն շրջաններում, որոնք մի ամբողջ պատմական շրջան յետ են մնացած կենտրոնական Ռուսաստանից, ուր դեռ ամբողջապէս լիկելիցիայի չի ենթարկւած միջնադարեան նիստ ու կաց, — ապա վատահ կերպով կարելի է ասել, որ այդպիսի հեծելազորային արշաւանքից (кавалерийск. набег), այդպիսի «կոմունիզմից» ոչինչ չաւ բան չի դուրս գալ: Այդ ընկերներին մինչև ուղում ենք յիշեցնել մեր ծրագրի

յայտնի կէտը, որ առաւ է.

«Ռուսաստանի կոմունիստական կուսակցութիւնը կանգնած է պատմական-դատաւարգային տնտեսիւնի վրա, հաշի առնելով թէ տրւած ազգութիւնը իր պատմական դարձացման որ աստիճանի վրա է կանգնած» — միջնադարեան ուղից դէպի բուրժուական դեմոկրատիան, թէ բուրժուական դեմոկրատիայից դէպի խորհրդային կամ պրոլետարական դեմոկրատիան, — այլն: Ապա առաւ է, «Յամենայն դէպս այն ազգութիւնների պրոլետարիատի կողմից, — որոնք եղել են ճշնշող ազգութիւններ, — անհրաժեշտ է առանձին գոյութիւն և առանձին ուշադրութիւն դէպի ճնշւած և իրաւագուրկ ազգութիւնների աշխատաւորական մասսաների ազգայնական դացմունքների մնացորդները» (տես «Ռուսաստանի կոմունիստական (բոլշեկիների) կուսակցութեան ծրագրեր»):

Այսինքն, եթէ օրինակի համար՝ բնակարանների ռեզակի խտացումը Ադրբեջանում յետ է մղում մեղմանից ադրբեջանական մասսաները, որոնք բնակարանը, ընտանեկան օջախը համարում են անձեռնմխելի, սրբութիւն, — ապա պարզ է, որ նոյն նպատակին հասնելու համար բնակարանների խտացման ուղղակի հանապարհ դէպք է փոխարինել անուղղակիով, կամ թէ՛ եթէ օրինակ Դաղստանի մասսաները սաստիկ վարակւած են կրօնական նախապաշարութեամբ, ապա պարզ է, որ կրօնական նախապաշարութեան դէմ կուրու ուղղակի ճանապարհը պէտք է փոխարինել անուղղակի, աւելի զգուշ ճանապարհների և այլն և այլն: Կար՝ — անհրաժեշտ է հրաժարել յետմնաց ժողովրդական մասսաներին «անյաղաղ կոմունիզացիայի» ենթարկել հեծելազորային արշաւանքներից, անհրաժեշտ է այդ յետմնաց մասսաները սովետական դարձացման ընդհանուր հոսանքի մէջ աստիճանական ձուլման ենթարկող շրջանայնաց և մի-

տածւած քաղաքականութեան անցնել:

Ընդհանուր գծերով անաւրանք են խորհրդային աւտօնօմիայի իրականացման այն պրակտիկ պայմանները, որոնց իրականացումը երաշխաւորում է Ռուսաստանի կենտրոնի և ծայրագաւառի միջև հոգևոր մօտեցումը և յեղափոխական հիմնաւոր միութիւնը:

Խորհրդային Ռուսաստանը կատարում է մի շարք ազգութիւնների և ցեղերի պրօլետարական պիտութեան շրջանակներում՝ կենակցելու աշխարհումս չտեսնւած մի փորձ, — կենակցութիւն՝ ամբողջապէս հիմնւած փոխադարձ համերաշխութեան, համաւորութեան և եղբայրական միաբանութեան սկզբունքների վրա: Յեղափոխութեան երեք տարիները ցոյց տւին, որ այդ փորձը ունի յաջողութեան բոլոր գրաւականները: Սակայն այդ փորձը Հմիայն այն հանգամանքում կարող է կատարեալ յաջողութեան հան-

դիպել, եթէ տեղերում վարած մեկտրճնական քաղաքականութիւնը ազգային խնդրում չի տարբերի յայտարարւած խորհրդային աւտօնօմիայ պահանջներից (հասկանալով այդ աւտօնօմիան իր բոլոր բազմազան ձևերով ու աստիճաններով) — եթէ տեղերում արւած մեր իւրաքանչիւր դորճնական քայլը՝ Կօզնի ծայրագաւառների ժողովրդական մասսաներին ճշգրտել պրօլետարական հոգևոր և նիւթական բարձր կուլտուրան այն ձևերով, որոնք համապատասխանում են այդ մասսաների կենցաղին և ազգային գէմքին:

Դրա մէջ է կենտրոնական Ռուսաստանի և Ռուսաստանի ծայրագաւառների յեղափոխական միութեան արագնգման գրաւականը, միութիւն որի առաջ պիտի ջախջախեն Սնտաւտայի բոլոր և ամեն տեսակ մեքենայութիւնները:

----->>>:::444<<<-----

2013



